— Կուրանա՞ս, լաւ՛… տանջանքները քեզի խոստովանել կ'ուտան: Բայց ես փուճ տեղ քեզի պէս անարգ գերուոյ մը հետ խօսիլ խոնարհեցայ. վաղը կ'երթանք իմ ամրոցս, հոն ես քեզի փոխել կ'ուտամ այդ ամբարտաւան արհամարհոտ ձեւդ էլ, լեզուդ էլ, կրօնքդ էլ. շատ ստրուկներ ես մոմի պէս կ'ակղցուցէր եմ, դու էլ կը կ'ակղնաս եւ կ'իմանաս թէ ի՛նչ կը նշանակէ ինձ պէս կին մը:

— Լաւ՛, շատ ինձ զգուանք պատճառեցիր, բաւական է այսչափս,— ըսաւ Գուրգէն ամենայն արհամարհանոք, եւ բարձրացնելով ձայնը,— բանտապա՛ն, բանտ երթանք,— գոռաց:

Երբ բանտապանը ներս մտաւ, Գուրգէն դէպի դուռը շտկուեցաւ առանց խօսելու: Իսկ կինը դառնալով բանտապանին՝ իշխանաբար՝

— Եթէ գլուխդ ողջ պահել կ'ուզես, լաւ պէտք է հսկես այս գերուոյն վրայ, վազն առաւօտ ինձ պիտի յանձնուի դա,— ըսաւ:

— Ո՞ւմ հրամանաւ կը խօսիս այդպէս, Տիկին:

— Եթէ այս ամիրապետին հրամանագիրը դու չես ճանչեր. քու տէրդ եւ քու քաղաքապետդ լաւ կը ճանչեն:— Եւ հրովարտակ մը տարածեց բանտապանին առջեւ:

— Ես իմ իշխանացս հրամանին միշտ հնազանդէր եմ, Տիկին,— ըսաւ մարդը շփոթելով այդ կատաղի կնոջ կերպարանքեն, եւ գնաց Գուրգէնի ետեւեն, որ անտարբեր եւ անխռով դէպ իր բանտը կ'երթար սաղմոսելով:

Իսկ կինը որ այն մեղ ծանօթ դիպուածեն վերջ՝ Ապահունեաց երկիրը թողէր՝ փախեր Խոյի մօտ դղեակ մը կը բնակէր՝ կ'երթար հրամանները տալու իւր պահապանաց, որ առաւօտուն կանուխ ճամփայ ելնեն տանելու համար Գուրգէն, եւ իւր մտքին մէջ դիւական տանջանքներ կը պատրաստէր: